

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ. կէս տարեկան 6 ռուբլ.
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Ստորագրողները պետք է նաև ուղարկեն
Խմբագր. Քեդակսիա «Միսսիս»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):
Յայտարարութիւն ընդունվում է ամեն շաբաթ:
Յայտարարութիւնները համար. վճարում են
խրախուսելով թուով 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մշտական անհոգութիւնը—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Նամակ Ախալցխայից, Ներքին լուրերը—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Ամերիկա, Անգլիա, Արտաքին լուրերը—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ—ԲԱՆԱՍԻՍԻԱՆ, Կեանքի ազատողը:

ՄԵՏԱԿԱՆ ԱՆՀՈՂՈՒԹԻՒՆ

Մեր հասարակութեան գլխաւոր պակասութիւնը մշտական անհոգութիւնն է զէպի ամեն հասարակական երեւոյթները: Մենք սկսում ենք մտածել այս կամ այն բարեփոխման միայն երբ մի որ և է վտանգ է սպառնում մեզ:

Մինչև որ չէ յայտնվում, օրինակ, մի որ և է վարակիչ հիւանդութիւն, մենք անմաքուր գրութեան մէջ ենք պահում մեր քաղաքները և զիւղերը, չենք հոգում փողոցների մաքրելու մասին, ջրանցքների անցկացնելու մասին, և այլն: Բայց հենց որ յայտնվում է մի որ և է վարակիչ հիւանդութիւն, օրինակի համար տիֆ, կամ մի այլ ախտ, անմիջապէս կամենում ենք կարճ ժամանակում դրսեւոր մեր այն բոլոր պակասութիւնները, որոնց մասին չէինք հոգում ասորիների ընթացքում:

Հրաշքներ չէ կարելի գործել, չէ կարելի մի քանի շաբաթվայ մէջ վերցնել այն պակասութիւնները, որոնց դրսեւոր համար հարկաւոր է տարիների անընդհատ, անխնայ, տոկուն աշխատանք, մշտական հոգացողութիւն, անընդհատ վերահսկողութիւն:

Այդպէս է եղել վերջին ուսմիսը: Բայց պատերազմի ժամանակ, երբ յայտնվեցան մեր երկրում այլ և այլ վարակիչ հիւան-

դութիւններ: Տարիների ընթացքում մեր քաղաքներում և զիւղերում գրգռված աղբը, միշտ անմաքուր պահված մեր արտաքինները մենք ուզեցինք մի անգամից մաքրել. տասնեակ տարիներով մեր բնակութիւնների ապակաւով ոգը մենք մի քանի շաբաթվայ մէջ ուզեցինք առողջացնել. երբեք չէ հոգալով մաքուր ջրի մասին, չունենալով ուշիւն ջրանցքներ, կամ չուզենալով օգուտ քաղել արդէն եղածներից և միշտ խմելով անմաքուր, կեղտոտ ջուր, մենք, վտանգը յայտնվելուն պէս, յանկարծակի ուզեցինք ունենալ և ջրանցքներ և մաքուր ջուր:

Բայց դժբաղդութիւնն այն է, որ ինչպէս մենք շուտ յափշտակվում ենք և վառվում, այնպէս էլ շուտ սառնում ենք: Վտանգը անցնելուն պէս, մենք կրկին ամեն բան մոռացանք: Թիֆլիսցիներս շարունակեցինք չը մաքրել մեր փողոցները, չառողջացնել մեր օդը, չարունակեցինք խմել զոգուկի թուլութեան անմաքուր, սպանիչ ջուրը: Մենք երազում ենք մեծ ջրանցք անցկացնել, բայց օգուտ չենք քաղում արդէն եղած ջրանցքից, որ իր մասնաւոր միջոցներով, առանց ոչոքից օժանդակութիւն ստանալու անց է կացրել պ. Կորգանով: Մեր քաղաքային վարչութիւնը մեծ մեծ պլաններ է շինում մեր քաղաքի մէջ եւրոպական ձևով ահագին ջրանցք անցկացնելու, բայց եղած ջրանցքից օգուտ չէ կամենում քաղել, նիւթապէս օժանդակելով արդէն եղած մասնաւոր ձեռնարկութեանը:

Լրագրական թղթակցութիւնների մէջ անդադար դանդաղանք էինք կարգում: Երբեք քաղաքային վարչութեան անհոգութեան մասին: Ինչպէս երևում է այնտեղ էլ, մինչև վտանգը չը յայտնվի, ոչ ոք չի հոգայ ոչ մաքուր ջրի, ոչ էլ քաղաքի օդի,

փողոցների և արտաքինների մաքրութեան մասին, վերջապէս, ինչպէս առհասարակ ստում են, քաղաքը առողջացնելու մասին: Բայց այժմ երևանում է վտանգ է յայտնվել, որ միակ ունի մեր վերաբերութեամբ զիւլական այժ, զոնէ ժամանակաւորապէս արթնացնել մեզ մեր խոր քնից, մեր սպանիչ անտարբերութիւնից, մեր մշտական անհոգութիւնից: Այդ վտանգը վարակիչ հիւանդութիւնն է, տիֆն է, որ յայտնվեցաւ այժմ երևանի նահանգում, և որից, որքան մեզ յայտնի է, մեռնում են ոչ թէ միայն քաղաքում, այլ և զիւղերում և ոչ թէ միայն աւելի անաջող պայմանների մէջ ապրող զիւղացիներ և արուեստուոր դասակարգի մարդիկ, բայց և ամենայայտնի ընտանիքների, ունեւոր, երիտասարդ անձինք, որոնց կեանքի պայմանները, ի հարկէ, աւելի անաջող են, քան թէ հասարակութեան ստորին դասակարգի:

Միթէ հիմա էլ չեն մտածի ասելիզացիայի և զէպիֆիկցիայի մասին, այսինքն երկրորդ մաքրելու, առողջացնելու մասին, քաղաքները և զիւղերը մաքուր պահելու, ժողովրդին առողջ ջուր տալու մասին:

Եթէ առհասարակ չենք հոգում մեր մասին, զոնէ հոգայինք վտանգի ժամանակ: Եթէ այդ էլ չանենք, կը նշանակէ բոլորովին զուրկ ենք հասարակական առաջին և ամենատարրական, բնական յաճութիւնից: անձնապաշտպանութեան զգացմունքից:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՅԼԱՑՈՒՄԻՑ

Սեպտեմբերի 9-ին

Վազուց է որ պ. պ. հաշտեանները ստացել

ԲԱՆԱՍԻՍԻԱՆ

ԿԵԱՆՔԻ ԱԶԱՏՈՂԸ

Անան այն զեղեցիկ երեկոններից մինն էր, երբ մանաւանդ Ամերիկայում բնութիւնը այնպէս զոգնաբար պարզանորոգ է աշխարհի կախարչութիւնով, մի զեղեցիկ հագնված պարուն ձեռնով էր այն ծառայողների մէջ, որ տարածված էին էրի լճի երկայնութիւնով, ոչ հեռու հաշտեանի Նիսպարի ջրվեժից, լճի տեսարանը շատ զեղեցիկ էր. նրա լայնատարած մակերեսով վրա ունեւոր մի զով հողմիկ էր փչում, որ դրսեւորը ինք իրան հանդարտիկ երգելով, աննկատելի կերպով հեռանում էր մարդարանկ վայրից: Վերջապէս նա անցկացաւ մի այնպիսի նեղ ճանապարհով, որով հագնւ. թէ անցնում էին դրսեւորները և ուր անընդհատ պատճառով տիրում էր խորին լուսութիւն: Այս նկատելով, նա կամեցաւ յետ դառնալ, բայց յանկարծ նորա ականջին հասաւ մի խոր հառաչանք. նա աչքած կանգ առաւ և սկսեց շրջառայել: Նա իր ներքնակող մտած, լճի ափի վրա, մի թփի տակ, տեսաւ նրան, ամառ մի մարդ, որ ձեռքին բռնելով անձանակը, երևում էր որ նոր օգնութիւն կամենում էր վերջ գնել իր կեանքին:

Արագ և ճարպիկ ցատկումով, դրսեւորը, մի րոպէում յայտնվեցաւ դժբաղդի առաջ և իսկույն ինչեց նրա ձեռքից ատրճանակը: Ան-

ծանօթը այսպէս յանկարծ և անսպասելի կերպով բռնվելով, երկիւղից վեր թռաւ տեղից:—Պարտէ, ինչպէս համարձակեցաւ, բացառանք նա:

—Ես իմ պարտաւորութիւնն եմ կատարում, ստանութիւնով պատասխանեց նա:—Բայց որովհետեւ ես կարծում եմ որ մենք միմեանց հետ փոքր ինչ կը խօսենք, այս պատճառով վատ չէր լինի եթէ նստէինք, որովհետեւ նստած խօսելը աւելի յարմար է: Այս ասելով, նա տարածվեց խոտի վրա, մի և նոյն ժամանակ մի հարեանցի հայեացք ձգելով դժբաղդի վրա:

Սա մի քանի և ութ տարեկան երիտասարդ էր, որ հագնված էր բաւականի հին շորերով, թէպէտ երևում էր, որ երբեմն լաւ էին եղել: Երիտասարդի կերպարանքը բաւական տխուր էր և կարծես նա զարմանում էր անծանօթի այս կերպ պարզ վարվողութիւնից, բայց այն յուսահատվածի հետ սրանից աւելի վատ ինչ կարող էր պատահել: Այս պատճառով նա էլ նստեց խոտի վրա և հետաքրքիր կերպով սկսեց նայել անծանօթին:

—Ի՞նչ կամենում էիր վերջ տալ ձեր կեանքին, աշխատային այսպիսի մի սքանչելի երեկոյան պահուն, սկսեց եկողը:—Միթէ չարժէ նա, որ դուք ընծայել էիր նորան ձեր կեանքը: Երիտասարդը քանի մի րոպէ տարբերվում էր մեծ չփութութիւնից, կեանքն ինձ անտանելի է դարձել և կարծում եմ որ շատ լաւ կը լինէր, եթէ միայն ազատվէի նրանից, ասաց նա, վերջապէս:

—Յայտնի բան է, որ նա, ով որ աշխարհիս համար ամենին պէտքական չէ և միայն արգելում է ուրիշներին, ստանութիւնով պատասխա-

նեց նրան խոտակիցը:—Նա շատ լաւ կը վարվէր, եթէ մաքրէր ճանապարհը: Աւելորդ մարդիկը ամենապատեղաւոր անդամներ են մարդկութեան համար:—Ես այս ասելով նա սկսեց կատակաբար ատրճանակիցը հանել մի փամփուշտը միւսի ետեւից և ամէն նրանց լինէր:

—Բայց այսու ամենայնիւ, դուք ինձ արգելում էք կատարելու իմ գիտաւորութիւնս, նկատեց երիտասարդը:

—Իսկ և իսկ այդպէս է, պատասխանեց նա, որովհետեւ ես այն կարծիքի եմ, որ իր սեփական գործերի մէջ, ոչ ոք չէ կարող իր գաղաւթը լինել և մինն էլ այն պատճառով, որ ես միշտ մտածել եմ և բարեօք համարել որ, ինքնասպանների համար լաւ կը լինէր եթէ ստանանին մի առանձին գաղաւթ, այնպէս որ, իւրաքանչիւրը որ կամենում էր անձնասպան լինել՝ զար գաղաւթներ և քաղաքներ նրան իր գրութիւնը: Այնուհետեւ, եթէ գաղաւթներ կը տեսնէր որ, անձնասպանութիւն կամեցող այնպիսի մի մարդ է, որի հետ ոչինչ չէ կարելի գործել և այն աստիճանի անպիտան է, որի մահովը ոչ ոք ոչինչ չի կորցնի: Նրան նա իրաւունք կը տար վերջացնել իր կեանքը և մինչև անգամ կը հոգար էլ նրա թաղման մասին, իրեն ոչինչ հոգ չը պատճառելու համար:

Չը նայելով իր տխուր արամազրութեանը, երիտասարդը այս օտարտի խօսքը լսելուց յետոյ, չը կարողացաւ զսպել իր ժպիտը, որը նկատեց և օտարականը:

—Այո, շարունակեց նա—այս է իմ միտքս, որովհետեւ ես իմ երիտասարդ ժամանակս իրաւաբան էի, այսինքն նոտարի պաշտօն էի վարում: մի փաստաբանի մօտ Պէտրիլանիայում, մինչև

են հոգեւոր կառավարութիւնից երեցփոխան Յովհաննէս աղա Վանցեանի հաղարարութիւնը, բայց այդ թղթերումն էլ ոչինչ չը գտան եկեղեցու հաշիւների վերաբերութեամբ: Բացի դրանից Վանցեանի երեք տարուայ սեւագրութեան տեսարակներն էլ ժապաւինեալ մատենաների նման անգիր դուրս եկան: Հաստ մտածեցին, վիճեցին, խելքներին զօռ տուին յարգելի հաշուառները, —ոչ մի եղակացութեան չը հասան, և ինչոքեցին Վանցեանից որ նոր հաշիւ չինէ, ներկայացնէ, իրանք էլ ընդունին: Եթէ չէր, պ. պ. հաշուառները, միթէ այդ չնորքն էլ ունէր, որ պիտի կարողանար ունիւնց մի բան դուրս բերել, անգիր մատենաներից գրաւոր հաշիւներ չինէ: Աւագեք խնդրեմ, էլ ինչու համար եկեղեցու գումարից երեցփոխան Վանցեանին տարեկան 600 ռուբլ. ուճիկ էիք տալիս, էլ ինչու համար նրան օգնական գրագիր էիք տուել, որի ուճիկն էլ նոյնպէս եկեղեցու գումարից էիք տալիս: Ո՞ր օրէնքի համաձայն էիք այդպէս կարգադրել: Ի՞նչ, հիմա աշխատեցէք, որ կարողանաք մի բան դուրս բերել: Մեր եկեղեցիների երեք տարուայ եկամուտն էլ, ծախսն էլ Աստուծուն է յայտնի և Վանցեանին, ուրիշ ոչ ոքի: Տարեկան 15—20 հազար ռուբլ. եկամուտ անեցող եկեղեցու երեցփոխանութիւնը, որ այդպիսի անապաշտով մարդուն էիք հաւատացել, ի հարկէ վերջը այսպէս էլ պէտք է լինէր. ով է մեղաւոր: Ի՞նչ պէտք է Վանցեանը պատրաստէ իր հաշիւը, այն ինչ հասարակութիւնը մի թղթով պահանջեց հաշուառներից որ ոչ մի հաշիւ չը չինեն, և ընդհանուր ժողով անեն ու յայտենին հասարակութեանը, որ Վանցեանը ոչ մի հաշիւ չունի: Ի՞նչ ինչ նպատակ կայ հասարակութեան այդ կերպ պահանջի մէջ, մեզ յայտնի չէ, բայց կարծում ենք թէ պատուելի հաշուառները ժողովրդի կամքի հակառակ վարվելու իրաւունք չունեն: Պ. պ. հաշուառները իրանց իրաւունքից բարձր համարեցին ընդհանուր ժողով անել, այլ հոգեւոր կառավարութեանը յանձնեցին հասարակութեան թուղթը: Հոգեւոր կառավարութիւնն էլ աւելորդ համարեց ժողով անել և յայտնել հասարակութեան գործի հանգամանքը, այլ մի պատկառելի հրամանով լիստիւ պատուիրեց:

որ կը որոնէի ինձ համար պարագլու: մի այլ ասպարէզ: Բայց ես դեռ ես չեմ վերջացրել իմ մտածած գաղաւթների մասին խօսքս: Ես և այն զաղաւթարի եմ որ, անձնասպանների համար սահմանված գաղաւթներ չը պէտք է վճար վերջ գնել այնպիսիների կեանքին, որ արդէն ձեռնարակ են կեանքից:

Հաստ անգամ մարդիկ որ և է բանի վրա շատ մոռն հանկացողութիւն ունեն, որի պատճառը լինում է զլիս արեան հոսանքը և մաքուր օդի պակասութիւնը: Ես փոքր իշատե տեղեկութիւն ունեմ և բժշկականութեան վրա, որովհետեւ մինչև իրաւաբանութեան պաշտօն ընդունելու, Նիւ-Եօրկում, զեղանատների գործարանում, օգնականի պաշտօն էի վարում: Բայց չը հեռանալ մեր խօսքից, ես խօսում էի նրանց մասին, որոնց գաղաւթներ թույլ չը պէտք է տայ անձնասպան լինելու, եթէ միայն կարելի լինէր համոզվել, որ նա այն աստիճան անօգուտ չէ, որ նորա ասպարէզի մասին չէ կարելի յուսահատվել, որ հարկաւոր է նրան միայն պահպանել հարկաւոր եղածին չափ: Դատարանը այս հանգամանքում կարող էր մեծ օգնութիւն հասցնել: Երեւակայեցէք ձեզ, որ արդէն զոյութիւն ունի այդպիսի մի գաղաւթ, ուր ես գաղաւթի պաշտօն եմ վարում և դուք էլ ներկայանում էք ինձ ինչպէս անձնասպան-տեղապահ: Ի՞նչ կը պատմէիք դուք ինձ ձեր մասին:

—Հաստ սակաւ բան, պատասխանեց երիտասարդը: Ես բաւական հարուստ ծնողաց զաւակ եմ: Իմ հայրս, որ Ֆիլադելֆիայում երեկի կաշավաճառ էր, բոլոր արեւմուտքի հետ հաղորդակցութիւն ունէր իր վաճառականութիւնով և մա-